

ԵՎԱ ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

բանասիրական գիտ. թեկնածու, ՀՊՄՀ

Վ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ՍԱՍՈՒՆԳԻ ԴԱՎԻԹ» ՊՈԵՄԸ ԺԱՄԱՆԱԿԻ ԳՐԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳԵԱՅԱՏՍԱՄԲ

Հ. Թումանյանի գրական ժառանգության անփոխարինելի մասն են կազմում պոեմները, որոնք դեռևս բանաստեղծի կենդանության օրոք են բարձր գնահատվել եւ իրենց դասական կատարելության մեջ հայ գրականության մեջ մնացել են որպես հավասարը չունեցող ստեղծագործություններ: Մեր ուսումնասիրության կենտրոնում է «Սասունցի Դավիթը»՝ բացառիկ մի գործ¹, որ մինչ օրս եղել եւ մնում է հայ գրականության գոհարներից: Պոեմը բազմիցս է գրավել ժամանակի գրաքննադատության ուշադրությունը՝ արժանանալով թե՛ բարձր գնահատության, թե՛ սուր եւ մերկապարանոց քննադատության: Մեր խնդիրն է պատմական հեռանկարի մեջ դիտարկել պոեմին տրված ժամանակի գնահատականը, պարզաբանել՝ ե՛րբ, ո՛ւմ կողմից եւ որքա՛ն հիմնավոր է առաջադրվել այս կամ այն հայեցակետը:

Քննադատության թիրախում եղել է պոեմի մշակվածության խնդիրը. Ժխտելով Թումանյանի ստեղծագործական մոտեցումը էպոսի մշակման գործում՝ այն հիմնականում որակվել է սոսկ «ազատ թարգմանություն»՝ հեղինակային ինքնուրույնությունից զուրկ երկ: Նույնիսկ Ավ. Իսահակյանը 1902 թ. հուլիսի 21-ի նամակում, բարձր գնահատելով հանդերձ Սասունցի Դավիթի կերպարը, պոեմի «ժողովրդական ոճերն ու դարձվածքները», «էպիկական պատմելու ձևեր», «հումորը», նշում է «անհատական ստեղծագործության» պակասը. «Քոնը ուղղակի՝ նյու-

¹ Հայ գրականագիտության մեջ բազմաթիվ հոդվածներ, ուսումնասիրություններ են գրվել «Սասունցի Դավիթ» մասին: Տես Ա. Ինճիկյան, «Սասունցի Դավիթը» գեղարվեստական գրականության մեջ, «Գրական թերթ», 1938, թ. 52. Ստ. Զորյան, «Սասունցի Դավիթ» մշակումները հայ գրականության մեջ, «Գրական թերթ», 1939, թ. 28. Աս. Ասատրյան, «Սասունցի Դավիթ» էպոսի մշակումները հայ գեղարվեստական գրականության մեջ, «Սասունցի Դավիթ» հոբելյանական ժողովածու, Երեւան, 1939, էջ 89-171. Էդ. Զրբաշյան, Պոեմի ժանրը սովետահայ գրականության մեջ, Երեւան, 1955, էջ 231-252. Մ. Զանփոլադյան, Թումանյանը եւ ժողովրդական էպոսը, Երեւան, 1969, էջ 13-77. Էդ. Զրբաշյան, Թումանյանի պոեմները, Երեւան, 1986, էջ 302-343 եւ այլն:

Թի ոտանավոր, մի փոքր մշակած վերածումն է»²: Առաջին հայացքից թվում է՝ իսկապես պահպանված է ժողովրդական նյութի արտաքին ձևը, մանավանդ եթե դրան հավելենք Թումանյանի³ խոստովանությունը, թե ինքը ոչինչ չի հորինել, բոլոր դրվագներն ու կերպարները վերցրել է ժողովրդական աղբյուրից: Խնդրի լուծումը դարձյալ տալիս է բանաստեղծը. «Եվ շնորհքը հենց էդ պատմելու մեջն է, որ իմանան՝ ինչը փոխեն, ինչը դուրս գցեն, ինչը պահեն, ինչ լեզվով, ինչ ոճով եւ ինչպես պատմեն, որ ե՛ւ գեղեցիկ դուրս գա, ե՛ւ ժողովրդականի համն ու հոտը չկորցնի»⁴: Հենց այս՝ միայն իրեն հատուկ Թումանյանական սկզբունքով էլ բանաստեղծը էպոսի մի քանի պատումներից ընտրում է հիմնական հասցեատիրոջ՝ երեխայի լեզվամտածողությունն ու ըմբռնողությունը հարիր դրվագներ եւ գրում եզակի մի գործ, որ մինչ օրս ընդունված եւ սիրված է ժողովրդի մեջ: «Այսօր պարզապես անհավատալի է թվում այն գեղագիտական կուրուլթյունը,- գրում է էդ. Զրբաշյանը,- որի պատճառով այդ քննադատությունը ոչ մի արժանիք չէր նկատում պոեմի մեջ, չէր տեսնում բանաստեղծի հզոր տաղանդի արտահայտությունը: Առհասարակ, «Սասունցի Դավիթը» թերեւս ավելի ժխտական կամ վերապահ վերաբերմունքի արժանացավ սկզբում, քան Թումանյանի մյուս նշանավոր պոեմները»⁵:

«Սասունցի Դավիթը» առաջին անգամ տպագրվում է 1903 թ. «Մուրճի» 2-5 համարներում: Պոեմն ունենում է եւս 7 տպագրություն՝ կառուցվածքային եւ ոճական որոշակի փոփոխություններով⁶: Նույն թվականին լույս տեսած «Բանաստեղծություններ» 3-րդ ժողովածուի մեջ այն ընդգրկվում է արդեն զգալիորեն փոփոխված տարբերակով եւ դառնում բազմաթիվ ու բազմաբնույթ արձագանքների ու գրախոսությունների առարկա:

Այսպես՝ 1904 թ. «Մշակի» 2-րդ համարում տպագրվում է Լեոյի գրախոսականը, որն ակնհայտորեն կրում էր միտումնավոր բնույթ: Ըստ քննադատի՝ Թումանյանը՝ «լեռներ երգող բանաստեղծը», 17 տար-

² Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու՝ 6 հատորով, հ. 2., Երեւան, 1979, էջ 40:

³ Հայտնի է, որ Թումանյանն առանձնապես չի հավանել պոեմը եւ մտադրություն է ունեցել ստեղծելու ազգային էպոսի կատարյալ եւ ամբողջական վերարտադրություն: Սակայն դա կլիներ բոլորովին այլ ստեղծագործություն՝ այլ արժանիքներով: «Սասունցի Դավիթը» գրվել է երեխաների համար եւ իր տեսակի մեջ մնացել է անգերազանցելի:

⁴ Հ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու՝ 10 հատորով, հ. 2., Երեւան, 1994, էջ 161:

⁵ Էդ. Զրբաշյան, Թումանյանի պոեմները, էջ 316:

⁶ Մանրամասները տես Հ. Թումանյան, ԵԼԺ, հ. Դ., Երեւան, 1991, ծանոթագրություններ, էջ 521-541:

վա ընթացքում ոչ միայն չի «հասունացել», այլև կորցրել է նույնիսկ ժողովրդական նյութից «մի բան ստեղծելու վաղեմի ընդունակությունը»․ ապացույցն է «Սասունցի Դավիթը»․ առանց ըմբռնելու ժողովրդական հյուսվածքի ոգին՝ «տնատողի դեր» է կատարել՝ արձակը չափածոյի փոխելով։ Շարունակելով խիստ ու անհիմն որակումները՝ Լեոն հայտարարում է․ «Սասունցի Դավիթ բազմաթիվ վարիանտների մեջ ընտրություն անել չէ կարողացել պ․ Թումանյանը, եւ այդ պատճառով սրա պոեմի մեջ կան արտաքին հանգամանքների, դեպքերի կույտեր, բայց վայրիվերո, քաոսական, առանց ներքին կապի եւ ընդհանուր, ղեկավարող մտքի... Չգտնելով այդտեղ հեղինակական ոչ մի ինքնուրույնություն՝ մենք այդ պոեմը, որ բռնում է 40 երես, չենք դնում պ․ Թումանյանի ինքնուրույն գործերի հաշվում»⁷։ Գրախոսականը հավաստում է, որ ժամանակի գրաքննադատական միտքը գործում էր որոշակի կաղապարների, «թայֆայական մտածողություն» սահմաններում։ Մշակական ազդեցությունից ձերբազատվելուց հետո Լեոն վերարժեկորում է իր կարծիքը⁸։

Նույնպիսի ժխտողական դիրքորոշում է ցուցաբերում Ս. Մանդինյանը։ Նա 1904 թ. «Տարազի» 7-րդ համարում տպագրված գրախոսության մեջ, բարձր գնահատելով Թումանյանի «կենսունակ» գրիչը, ժողովրդի ամենագեղեցիկ «հանքը»՝ «Սասունցի Դավիթը», համարում է անհաջող մշակում։ Գրախոսն, անշուշտ, համամիտ չէ Լեոյի այն կարծիքին, թե բանաստեղծը սպառել է ստեղծագործելու ներուժը, բայց տարակուսանք ու զարմանք է հայտնում «խոշոր թերությունների» վերաբերյալ՝ իբրեւ օրինակներ մատնանշելով հատկապես Կոզբաղինի հետ կապված դրվագները։ Ուշադիր ընթերցողն առնվազն զարմանում է Մանդինյանի մատնանշած թերությունների եւ առհասարակ մակերեսային դատողությունների վրա։ Իր դիտարկումը քննադատը եզրափակում է արտառուց հայտարարությամբ․ «Նա (Թումանյանը) կարծել է, իբր թե ինքը փոշոտ

⁷ Լեո, Հովհաննես Թումանյան. Բանաստեղծություններ, «Մշակ», թ. 2, Թիֆլիս, 1904:

⁸ Թումանյանի մահվան աղիթով գրած հուշերում Լեոն իր բացասական գնահատականները որակում է իբրեւ «մի ցավալի զուգադիպություն»․ «Հ. Թումանյանի բանաստեղծության նվիրված տողերիս մեջ գրել էի, թե Հովհ. Թումանյանի բանաստեղծություններն ամփոփված են Մոսկվայում տպված երկու փոքրիկ հատորների մեջ... Չափազանց պարզ է, ուրեմն, որ ես գնահատել եմ Հ. Թումանյանին այն նյութերով, որ տալիս են Մոսկվայի այդ երկու հատորիկները... եւ ոչ 1903-1904-ինը» (ԹԺՀ, Երեսան, 1969, էջ 53-54)։ Լեոն, սակայն, զարմանալիորեն մոռանում է երկու կարետոր փաստ. նախ՝ 1904 թ. «Մշակի» 2-րդ համարում գրախոսվել է հենց «Բանաստեղծություններ» 3-րդ ժողովածուն, որի գնահատականներն առավել քան բացասական էին, ապա՝ նախորդ երկու հատորներում (1890, 1892) «Սասունցի Դավիթ» պոեմը չի եղել։ Ուստի Թումանյանի արվեստին տրված որակումները բոլորովին էլ զուգադիպության արդյունք չէին։

գրադարաններում աշխատող ուսումնականի պաշտոնը պիտի կատարե, իբր թե լոկ ընդօրինակիչ պետք է լինի, միայն թե արձակ գրութիւնը չափաբերականի վերածե»⁹: Աղերսներ տանելով Պուլկինի հետ՝ Մանդինյանը Թումանյանին մեղադրում է էպոսի տարբերակներին հավատարիմ մնալու, «ստրկանալու» մեջ:

Պոեմի մասին հնչած այս կարծիքը զուրկ է բազմակողմանի եւ խոր վերլուծութիւններից, տեսական եւ սկզբունքային հիմնավորումներից: Զարմանալի կերպով անտեսվում են այն հատվածները, որոնք բանաստեղծի «չստրկանալու» ապացույցներն են եւ նրա տաղանդի, ինքնուրույնության ուղղակի արտահայտութիւնները:

Նշենք, որ տարիներ անց, երբ Թումանյանն անառարկելի հեղինակութիւն էր, իսկ նրա բանաստեղծական տաղանդը՝ անժխտելի իրողութիւն, «Սասունցի Դավիթը» դարձյալ գնահատվել է վերապահումով: Գր. Բալասանյանը 1910 թ. «Հանգես ամսօրյայի» առաջին համարում տպագրված «Ռուսահայոց նորագույն բանաստեղծները. Հովհաննես Թումանյան» 9 մասից բաղկացած մեծածավալ հոդվածում, ընդհանուր առմամբ բարձր գնահատելով Թումանյանի տաղանդն ու բանաստեղծական արվեստը, «Սասունցի Դավիթը» համարում է «անհաջող կազմված»:¹⁰ Հիշատակելով Լեոյի եւ Ս. Մանդինյանի բացասական կարծիքները պոեմի վերաբերյալ՝ Գր. Բալասանյանը կարծես հաստատում է վերջիններիս տեսակետը՝ եզրակացնելով. «Այդ անմշակ հանքը պետք ունի լավ մշակման եւ կատարելագործման»:¹⁰

Նույնպիսի կարծիք է հայտնում նաեւ Լ. Մանվելյանը «Ռուսահայ գրականութիւնի պատմութիւն» աշխատութիւնի մեջ: Ըստ նրա՝ Թումանյանը «քայլ առ քայլ հետեւել է բնագրին նույնիսկ մանրամասնութիւնների մեջ, եւ հետեւանքը եղել է այն, որ նրա քերթվածը գրեթե ազատ թարգմանութիւն է»¹¹: Քննադատը, իհարկե, անվերապահորեն ընդունում է, որ պոեմում առկա են «չատ բարձր արժեք» ունեցող հատվածներ¹²:

Ի տարբերութիւն վերը հիշատակված տեսակետների՝ 1904 թ.

⁹ Ս. Մանդինյան, Բանաստեղծություններ Հովհ. Թումանյանի, «Տարագ», թ. 7, Թիֆլիս, 1904, էջ 48:

¹⁰ Գր. Բալասանյան, Գրական դեմքեր. Հովհ. Թումանյան, մաս Ը., ՀԱ, թ. 4, Վիեննա, 1910, էջ 75:

¹¹ Լ. Մանվելյան, Ռուսահայ գրականության պատմություն, պրակ Դ., Թիֆլիս, 1911, էջ 86:

¹² Ուշագրավ է այն փաստը, որ թե՛ Գր. Բալասանյանը, թե՛ Լ. Մանվելյանը նույնպես կատարել են էպոսի գրական մշակման փորձեր, սակայն դրանք այսօր կարող են հետաքրքրել միայն իբրեւ համեմատության եզրեր՝ առավել ընդգծելու թումանյանական մշակման անգերազանցելիությունը:

«Մուրճի» առաջին համարում՝ 3-րդ ժողովածուի մասին ստվարածավալ գրախոսության մեջ, Ավ. Ահարոնյանը, հայացքն ուղղելով պոեմներին, դրանք համարում է տաղանդի լուրջ արտահայտություններ: Նա քննադատի սուր հոտառությունք ընդգծում է, որ «Սասունցի Դավիթ» նյութը բանաստեղծական նոր ձևերի ու պատկերների մեջ ներկայացնելու համար «պետք է անպատճառ բանաստեղծ եւ այն էլ դյուցազներգու բանաստեղծ ծնված լինել»¹³: Եթե «Անուշը» գրելիս բանաստեղծն ազատ է ե՛լ հերոսների ընտրության, ե՛լ իրադարձությունների պատկերման տեսանկյունից, ապա այս դեպքում պարտավոր է հաշվի առնել ժողովրդական էպոսի մանրամասները: Այստեղ է, որ պահանջվում է մեծ տաղանդ. Թումանյանը, հավատարիմ մնալով նյութին, կարողացել է այնպիսի վարպետությամբ պոեմը «գարգարել նորանոր պատկերներով, համեմատություններով, ժողովրդական ասացվածքներով, որ դժվար է հինը եւ նորը գատել իրարից, կարծես նա այդպես էլ եղել է միշտ»¹⁴:

Ահարոնյանը, ձեռնպահ մնալով պոեմի մանրակրկիտ քննությունից, համեմատում է «Սասունցի Դավիթ» մի քանի տարբերակները եւ Թումանյանի մշակած համապատասխան հատվածները՝ առաջ քաշելով այն միտքը, որ ժողովրդական բանավեստի անգին գանձերը հանրության սեփականություն կարող են դառնալ միայն գրական հրաշալի մշակման դեպքում: «Պ. Թումանյան, «Սասունցի Դավիթը» գրական լեզվի վերածելով, մեր ժողովրդական ընթերցանության գործին ահագին ծառայություն է մատուցել: Շնորհիվ նրա՝ այժմ մեր միակ դյուցազներգությունը կարող է հաճույքով կարդալ ու հասկանալ յուրաքանչյուր հայ մարդ»¹⁵: Բերելով որոշ կտորներ՝ գրախոսն ընդգծում է Թումանյանի աշխատանքի ամենակարեւոր կողմը, այն է՝ բանաստեղծը խորապես ըմբռնել է բնագրի ոգին եւ դրանով պայմանավորված՝ մեծ վարպետությամբ, ժողովրդական ոգով ու ոճով գարգարել ու ճոխացրել է նյութը: «Սասունցի Դավիթը» ծայրերի-ծայր գրված է շնորհալի կերպով եւ մեր ժողովրդական ու աշակերտական գրադարանների համար մի գանձ է»¹⁶, - եզրափակում է Ահարոնյանը:

1904 թ. «Լուծա» հանդեսի երկրորդ համարում տպագրված մեկ այլ գրախոսության հեղինակ Գ. Ենգիբարյանը դյուցազներգակ բանաստեղծի տաղանդի նախապայման է համարում պատմության մեջ ժամանակի

¹³ Ավ. Ահարոնյան, Հ. Թումանյան. Բանաստեղծություններ, «Մուրճ», թ. 1, Թիֆլիս, 1904, էջ 184:

¹⁴ Անդ, էջ 185:

¹⁵ Անդ, էջ 184:

¹⁶ Անդ, էջ 186:

ոգուին եւ ավանդույթուններին հավատարիմ մնալու, ժողովրդի իդեալները եւ հայացքները գեղարվեստորեն, կենդանի լեզվով ու ոճով պատկերելու կարողութիւնը: Անդրադառնալով «Սասունցի Դավթին»՝ գրախոսը նշում է, որ Թումանյանին հաջողվել է դյուցազներգութեան տարբերակներից «հաջող կերպով ստեղծագործել իր երկը»՝ նպաստելով «ազգի ինքնագիտակցութեան զարգացմանը»¹⁷: Ենգիբարյանը համապատասխան հատվածներով վերապատմում է պոեմը՝ մեջընդմեջ արժեւորելով բանահյուսութեանը հատուկ չափազանցութիւններին, նկարագրութիւններին, համեմատութիւններին տեղին եւ գեղեցիկ կիրառութիւնը, գեղարվեստական տակտը, լեզուն եւ ոճը: Ենգիբարյանը ընդհանուր առմամբ բարձր է գնահատում Թումանյանի քնարը, սակայն գրախոսութիւնն աչքի չի ընկնում խոր ու համակողմանի վերլուծութեամբ, նուրբ արժեւորումներով:

Ուշագրավ է՝ «Սասունցի Դավթին» վերաբերող որոշ գրախոսութիւններ առավելապէս աչքի են ընկնում նկարագրական մեթոդով: Հեղինակները ձեռնպահ են մնում պոեմը ըստ էութեան արժեւորելուց, առանց որեւէ մեկնաբանութեան պարզապէս վերաշարադրում են գործողութիւնների հաջորդական ընթացքը: Այսպէս՝ Հ. Սիմեոն Երեմյանի «Ազգային դեմքեր. գրագետ հայեր» գրքի 8-րդ շարքում ներկայացվում է նաեւ Հ. Թումանյանը: Խոսելով «Սասունցի Դավթի» մասին՝ Երեմյանը մեկ նախադասութեամբ անգամ չի արտահայտում իր գնահատողական վերաբերմունքը ժողովրդական էպոսի գրական մշակման մասին եւ զարմանալի աղքատութեամբ ու սոսկական վերաշարադրանքով է ներկայացում պոեմը:

Ժամանակի հայտնի գրաքննադատներից Ա. Տերտերյանը, իր «Հայրենի եզերքի քնարերգուն» գրքում քննելով Թումանյանի ստեղծագործական ուղիներն ու բանաստեղծական աշխարհի նրբերանգները, կենսական խնդիրների շրջանակները, անդրադառնում է նաեւ «Սասունցի Դավթին»: Պատմական որոշակի հիմնապատկերում դիտարկելով պոեմը՝ Տերտերյանն այն համարում է բանաստեղծի մարդասիրական հայացքների արտահայտութիւն: Քննադատը փորձում է յուրաքանչյուր գործողութեան եւ խոսքի մեջ տեսնել հայրենի եզերքին բնորոշ ինչ-որ առանձնահատկութիւն, իսկ Դավթի իդեալական կերպարը մեկնաբանում է Թումանյանի նահապետական կենսահայեցութեամբ. «Սասնո տերերի պատմութեան վրա նա դրել է իր հայրենի եզերքի կնիքը»¹⁸: Դավթի՛ր՝ որ-

¹⁷ Գ. Ենգիբարյան, Հովհ. Թումանյան. Բանաստեղծություններ, «Լուսա», թ. 2, 1904, էջ 236:

¹⁸ Ա. Տերտերյան, Հովհ. Թումանյան. Խայրենի եզերքի քնարերգուն, Վաղարշապատ, 1912, էջ 78:

պես «աղի տղա», պաշտպանում, խնամում է ոչ միայն իր ազգին, այլև ալյակրոն օտար մարդկանց, այլ խոսքով՝ Հայաստանում «գառն ու գայլը միասին են եղել ապրելիս հաշտ ու խաղաղ»¹⁹: Ա. Տերտերյանն այսպիսի մոտեցումը հնարավոր է համարում, «որովհետեւ նյութի մշակումը տվել է հայրենի եզերքի քնարերգուն՝ նահապետական արժեքների երգիչը»²⁰:

«Սասունցի Դավիթ» պոեմի մասին հնչած բազում կարծիքների շարքում առանձնանում է Պ. Մակինցյանի տեսակետը: 1912 թ. Մոսկվայի «Գարուն» ամսանախի 3-րդ գրքում տպագրված «Դիմագծեր» մեծածավալ հոդվածում, մանրակրկիտ ուսումնասիրելով բանաստեղծի երկերը, Մակինցյանը «Սասունցի Դավիթը» համարում է պոեմների մեջ ամենահաջողվածը: Քննադատը բավական հիմնավոր ու գիտական լրջությամբ քննում, համեմատում է գեղարվեստական երկի եւ բնագրի նմանություններն ու տարբերությունները՝ առաջինը համարելով միանգամայն ինքնուրույն գործ: Կենտրոնանալով Դավիթի կերպարի, նրա գործի եւ խոսքի թուլամայնական հղացումների վրա՝ Մակինցյանը իրավացիորեն մատնանշում է դրանց առավելությունները՝ միաժամանակ մեկնաբանելով հեղինակային փոփոխությունների նպատակն ու գաղափարական միտվածությունը: «Նա ժողովրդական վարիանտից առնում է այն, ինչ որ ըստ նրա հասկացողության սազում է դուլցագին, եւ ավելացնում այն, ինչ որ այնտեղ պակասում է, որովհետեւ բանաստեղծը պատկերացնում է հերոսին ըստ իր ըմբռնումի, իր ցանկացած գունավորումով»²¹:

Հեղինակային որոշ բացթողումներ, իհարկե, Մակինցյանը համարում է տեղին եւ պատճառաբանված, սակայն մեկ-երկու դեպքում, չհամաձայնելով թուլամայնական հետ, կրճատումները անվանում է «վնասակար»: Այսպես՝ միանգամայն հասկանալի եւ ընդունելի է Դավիթի մանկական չարությունների պատմությունները նկարագրող հատվածները հանելը (առաջին հրատարակության մեջ կային). դրանք դաժանության որոշ գծերով ստվերում էին մեծահոգի եւ բարեսիրտ հերոսին: Սակայն Մակինցյանը սխալ է համարում բնագրային այն փաստերից հրաժարումը, որոնք անհասկանալի են դարձնում գործողությունների տրամաբանությունը. իբրեւ օրինակներ քննադատը նշում է Ձենով Օհանի կնոջ թշնամական վերաբերմունքի բուն պատճառից հրաժարումը, Կողբադինին «վազան շուն» անվանելու նախապատմությունը:

¹⁹ Անդ, էջ 79:

²⁰ Անդ, էջ 80:

²¹ Պ. Մակինցյան, Դիմագծեր, «Գարուն» գրական-քննադատական ամսանախ, գիրք Գ., Մոսկվա, 1912, էջ 294:

Հարկ է նկատել, որ շատերն առհասարակ պոեմի մասին խոսելիս անտեսում էին այն կարեւոր հանգամանքը, որ «Սասունցի Դավիթը» գրվել է նախեւառաջ երեխաների ընթերցանության համար, ուստի հենց դրանով էլ պայմանավորված է բանաստեղծի՝ ժողովրդական մի շարք պատումներից որոշ դրվագների ընտրությունը: Պոեմի թեմատիկ-գաղափարական բովանդակությունը, ազգային-հայրենասիրական գաղափարախոսությունը, երեխաների դաստիարակությունը դառնում են այն նախապայմանները, որոնցով առաջնորդվում է Թումանյանը՝ դուրս թողնելով բազմաթիվ մանրամասներ, սյուժետային դրվագներ: Այս դեպքում եւս զարմանալի եւ փոքր-ինչ անհասկանալի է Մակինցյանի դիտողությունը. նա կարծես անտեսում է վերոհիշյալ հանգամանքը. Թումանյանը չէր կարող ներառել բոլոր այն փաստերը, որոնք հակազեղարկեստական էին, հակաբարոյական, անհասկանալի մանուկ ընթերցողին:

Այնուամենայնիվ, «Սասունցի Դավիթը» համարելով ամենահաջողված պոեմը՝ Պ. Մակինցյանը աղերսներ է տանում նաեւ Գր. Բալասանյանի նույնանուն պատմական պոեմի հետ, ընդգծում Թումանյանի ստեղծագործության անհամեմատ բարձրարժեք լինելը: Իհարկե, դրա կարեւոր նախապայման քննադատը համարում է նաեւ լեզուն, որով մշակել ու գրել է բանաստեղծը. «Հովհ. Թումանյանի հերոսները հայերեն են խոսում, եւ նրանց լեզուն՝ սահուն, ոճը վճիտ է, եւ ոչ մի խրթին համեմատություն, ոչ մի մթին պատկեր. անզարդ-հարազատ ժողովրդական լեզու, հստակ ու հնչեղ, որպես լեռնային արծաթախոս վտակը»²²:

Պ. Մակինցյանի՝ պոեմին վերաբերող վերլուծությունն ու մեկնաբանությունները, ի տարբերություն նախորդների, աչքի են ընկնում հետաքրքիր դիտարկումներով, տարբեր հերոսների հոգեբանության նուրբ ելեէջների բացահայտմամբ, գաղափարական արժեք ներկայացնող պատկերների մեկնաբանմամբ: Գրախոսը հիշատակում է նաեւ Լ. Մանվելյանի կարծիքը՝ տրամաբանորեն հակառակ տեսակետը հաստատելու համար. «Այդպե՞ս է արդյոք: Հովհ. Թումանյանը միայն ժողովրդական շե՞նքն է նորոգել եւ զարդարել այն պչրանքով: Իհարկե ոչ: Հովհ. Թումանյանը նոր ոգի, նոր բովանդակություն է ներշնչել այդ շենքին եւ ժողովրդի հավաքած քարերից իր սեփական կառուցվածքն է հրաշակերտել: Իսկ այն հանգամանքը, որ բանաստեղծը բնագրին մոտ է մնացել — դա պլյուս է եւ ոչ մինուս»²³: Պ. Մակինցյանի գնահատականը անբեկանելի

²² Անդ, էջ 299-300:

²³ Անդ, էջ 302:

է. «...Իսկական եւ անզուգական գեղարվեստական գործը պատկանում է Հովհ. Թումանյանին»²⁴:

1914 թ. մարտի 28-ին Մոսկվայի Հայ ուսանողների առջեւ դասախոսությունը հանդես է գալիս Ա. Մյասնիկյանը: Անդրադառնալով Թումանյանի մանկական գործերին՝ բանախոսը դրանք համարում է հակադաստիարակչական, քանի որ նրանցում «երգվում են ոխը, չարությունը, խորամանկությունը, վրեժը»։ Հատկություններ, որոնք ի վերջո պատժվում են, այնինչ երեխաներին պետք է դաստիարակել միայն դրական օրինակով, իսկ չարին ոչ թե պիտի պատժել, այլ ուղղել²⁵: Մյասնիկյանը գնահատության է արժանացնում միայն «Սասունցի Դավիթը»՝ նշելով, որ «այստեղ միայն կարելի է բռնել Թումանյանի օձիքից: Այստեղ երեւան է գալիս նա իր գեմոկրատիական գծերով»²⁶:

Ինչպես նկատում ենք, գնահատումները խիստ տարբեր էին ու հակասական: Պատկերը որոշակիորեն փոխվում է ավելի ուշ: 1919 թ. «Ալիք» գրական ժողովածուում հրատարակվում է Ե. Տեր-Մարտիրոսյանի «Հովհ. Թումանյան» ուսումնասիրությունը, որի 3-րդ ենթագլուխը նվիրված է «Սասունցի Դավիթ» պոեմին: Փոքրածավալ անդրադարձի կարեւոր եզրակացությունն այն էր, որ բնագրի գեղարվեստական վերամշակման տեսակետից (թե՛ արձակ եւ թե՛ չափածո) ամենահաջողվածը Հ. Թումանյանինն է, «որը առհասարակ գիտե վարպետորեն օգտվել ժողովրդական բանահյուսության գոհարներից՝ միաժամանակ հավատարիմ մնալով նրա արտահայտության հիմնական պահանջներին»²⁷:

«Ժողովրդի ձայն» թերթի փետրվարի 20-ի համարում Գ. Լեւոնյանը տպագրում է «Հայաստանի վերածնունդը եւ Սասունցի Դավիթը» հոդվածը՝ նվիրված Թումանյանի ծննդյան հիսնամյակին: Պոեմը համարելով «մի գանձ», «մի գոհար»՝ «մեր միջնադարյան անգիր մատենագրություն մեջ», որ խորհրդանշել է Հայ ազգի դարավոր ստրկությունը, ապա՝ վերածնունդը՝ հոգվածագիրը ոգեւորությունը ու մեծ պաթոսով խոսում

²⁴ Անդ, էջ 304:

²⁵ Կոմունիստական գաղափարախոսությամբ առաջնորդվող բանախոսը մարդկային բազմաբնույթ կյանքն ու տարողունակ հարաբերությունները տեղավորում է ինչ-որ սահմաններում, որի ներսում հնարավոր է փոխել ամեն ինչ: Սակայն ժամանակը ցույց տվեց՝ իրավացին Թումանյանն էր. կյանքը չարի ու բարու անվերջանալի պայքար է, եւ երեխան անմասն չէ այդ կյանքից, ուստի պիտի համոզվի, որ ցանկացած չարություն ի վերջո պատժվում է, իսկ բարին՝ միշտ հաղթում:

²⁶ «Մշակ», թ. 76, Թիֆլիս, 1914:

²⁷ Ե. Տեր-Մարտիրոսյանի, Հովհ. Թումանյան, «Ալիք» գրական ժողովածու. I գրքույկ, Պյատիգորսկ, 1919, էջ 43:

է Սասունցի Դավիթի կերպարի, նրա հաղթական ուժի, ըմբոստ ոգու, ազնվության, մեծահոգության, բարոյական բարձր հատկանիշների մասին: «Սասունցի Դավիթը» Հայաստանի վերածնունդը խորհրդանշող մի պայծառ էպոպեա է»²⁸, - եզրափակում է Գ. Լեւոնյանը: Պոեմի գեղարվեստական արժանիքներն ու բնորոշ առանձնահատկություններն այս անգամ դարձյալ մնում են հետին պլանում:

Այսպիսով՝ չնայած ժամանակի գրաքննադատության՝ «Սասունցի Դավիթ» պոեմի մասին տարբեր, երբեմն իրարամերժ, միակողմանի գնահատություններին, անհիմն դիտարկումներին, այնուամենայնիվ գրախոսականներում մատնանշվեցին Թումանյանի գեղարվեստական աշխարհը բնութագրող որոշ նրբերանգներ, որոնք հետագայում խոր եւ հիմնարար վերլուծությունների առիթ դարձան:

Անշուշտ, ամենամեծ քննադատը ժամանակն է: ԻԱ. Ղարի հեռավորությունից գնահատելով «Սասունցի Դավիթ» պոեմը՝ նկատում ենք, որ այն լավագույնս է ամփոփում եւ բացահայտում հայ ժողովրդի նվիրական երազանքներն ու հոգեբանությունը, արժեքային համակարգն ու մտածողությունը եւ հայ գրականության, մասնավորապես մանկական գրականության մեջ եղել եւ մնում է այն եզակի գոհարներից, որոնք ժամանակի ընթացքում երբեք չեն կորցնում իրենց ոգեղեն արժեքն ու փայլը:

РЕЗЮМЕ

Статья представляет оценки литературной критики, касающиеся поэмы «Давид Сасунский» Ованеса Туманяна. Исследователи отмечают проблему структурирования поэмы, отрицая творческий подход Ованеса Туманяна в деле обработки эпоса. Произведение в основном было классифицировано как «свободный перевод», произведение, лишённое авторской самостоятельности. Поэма неоднократно удостоилась как высокой оценки, так и острой и необоснованной критики. Тем не менее, дружеские и публичные отклики о поэме «Давид Сасунский» являются уникальными оценками и раскрывают не только художественный мир Туманяна, но и литературно-эстетические взгляды на литературную критическую мысль того времени.

²⁸ Գ. Լեւոնյան, Հայաստանի վերածնունդը եւ Սասունցի Դավիթը, «Ժողովրդի ձայն», թ. 39, Թիֆլիս, 1919:

SUMMARY

The article presents the appraisals by the literary criticism of the time given to H. Toumanyanyan's poem "David of Sassoun". The studies show that the criticism was mainly targeted at the problem of the arrangement of the poem. Denying Toumanyanyan's creative approach in poem's arrangement it was basically qualified as just a "free translation": a poem deprived of the author's independence. The poem has repeatedly received both high evaluations and sharp and unreasonable criticism. Nevertheless, the friendly and public responses to the poem "David of Sassoun" have been unique appraisals and revealed not only Tounamyanyan's creative world, but also literary and aesthetic views on literary criticism of the thought of the time.

